ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-

22 մայիսի 2024 թ.

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ
ԳԵՂԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Սույն թվականի մայիսի 13-ին ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննչական երրորդ վարչության քննիչ Ռ.Մուխսիխաչոյանի՝ քրեական վարույթ չնախաձեռնելու, ՀՀ գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Էդ.Արսենյանի՝ բողոքը քննության առնելու մասին որոշումների դեմ Ալեքսանդր Սիրունյանի բողոքի հիման վրա Հակակոռուպցիոն դատարանից Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ըստ ընդդատության փոխանցված թիվ ՀԿԴ/0110/11/24 վարույթը, և դրա ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Ձեր՝ 2024 թվականի ապրիլի 29-ի որոշումը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

2. Եթե հիմնական դատաքննության ընթացքում ի հայտ են գալիս այնպիսի փաստեր, որոնց հիման վրա վարույթը ենթակա է փոխանցման ըստ ընդդատության, ապա կողմերի համաձայնությամբ դատարանը շարունակում է վարույթը: Կողմերից մեկի առարկության դեպքում վարույթը որոշմամբ փոխանցվում է ըստ ընդդատության: (…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն

նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում դատավորը առարկայական ընդդատության հարցի որոշման համար վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին կայացված որոշումը ուղարկում է դատական վարույթի մասնակիցներին, որոնք այն ստանալու պահից եռօրյա ժամկետում կարող են վարույթի առարկայական ընդդատության վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել Վճռաբեկ դատարան: (…)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ (…)»:

Վերոնշյալ քրեադատավարական նորմի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ Վճռաբեկ դատարանին վերապահված է առաջին ատյանի դատարանների միջև միայն այն գործերի ընդդատության վերաբերյալ հարցի լուծման իրավասությունը, որոնց դատական վարույթն առաջին ատյանի դատարանն իրականացնում է **նախնական և հիմնական դատաքննության կարգով**:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Հանրային մասնակիցների վարութային ակտերի (մինչդատական ակտերի) իրավաչափության դատական երաշխիքները» գլխի նորմերի վերլուծությունից հետևում է, որ տվյալ փուլում դատական վարույթի նախնական և հիմնական դատաքննության եղանակով կազմակերպելու ընթացակարգային պահանջ նախատեսված չէ: Հետևաբար, տվյալ փուլում առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության հարցը լուծելու իրավասություն ՀՀ Վճռաբեկ դատարանին վերապահված չէ:

Վերոգրյալի հաշվառմամբ և նկատի ունենալով, որ առկա իրավակարգավորումների պայմաններում, վերոնշյալ հարցի քննարկումը դուրս է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով ՀՀ Վճռաբեկ դատարանին վերապահված լիազորությունների շրջանակից՝ վերադարձվում է թիվ ՀԿԴ/0110/11/24 վարույթը:

Հարգանքով՝ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ